ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 31.10.2023թ. հ.010 գրության՝ տեղեկացվում է, որ «Երևանի Գրիգոր Բաղյանի անվան հ.141 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման անհրաժեշտությունը Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվել է ինչպես Պետական գույքի կառավարման կոմիտե՝ նկատի ունենալով նշյալ կազմակերպության կազմակերպաիրավական տեսակը, այնպես էլ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ դիտարկելու հիմանորոգման կամ վերակառուցման ծրագրերում ընդգրկելու հնարավորությունը: ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 797-Ն (վերջին փոփոխությունը՝ 2022 թվականի հոկտեմբերի 27-ի 1666-Ն որոշմամբ) որոշմամբ՝ դպրոցն ընգրկվել է ՀՀ-ում սեյսմակայունության տեսակետից առավել վտանգավոր և մինչև 2035 թվականը վերակառուցվելիք դպրոցների ցանկում: Դպրոցի նախահաշվի շրջանակում հնարավորինս իրականացվում են մասնակի նորոգման և գույքի համալրման աշխատանքներ:

Ինչ վերաբերում է դպրոցի շենքի նկուղին և, հետևաբար, ապաստարան չունենալու հարցին, տեղեկացվում է, որ դպրոցի համակազմի համար որպես ապաստարան նախատեսված է հարևանությամբ գտնվող այլ տարածք:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ